**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
**ՋՈՎՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

---

19. 04. 2016թ.
N 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Ջովք համայնքի ավագանու 2016թ-ի ապրիլի 14-ի երրորդ հերթական նիստի որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի
Ջովք համայնքի գյ. Խճուղի 16
Էլ. փոստ .՝ angin.araqelyan@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ N 10

14-ը ապրիլի 2016թ

### ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջները՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ջովք համայնքի ավագանու 2016թ-ի ապրիլի 14-ի երրորդ հերթական նիստի օրակարգը

1.Ջովք համայնքի 2016թ-ի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի քննարկում:
2.Ջովք համայնքի ավագանու 2013թ-ի փետրվարի 27-ի թիվ 9-Ն և 2014թ-ի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին
3.Ջովք համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի22-ի թիվ 33, 2013թվականի ապրիլի 13-ի թիվ 11 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին
4.Համայնքի ավագանու 2015թ-ի դեկտեմբերի 22-ի թիվ 31-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5.Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին
6.Համայնքում հանրային լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին
7.Ջով ք համայնքի բնակիչների մասնակցության կարգը հաստետու մասին
8.Ջովք համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 39 և 38 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հ. ԳԱԼՍՏՅԱՆ

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովքի գլխ.խճուղի 16
Էլ. փոստ angin.araqelyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ն

14-ը ապրիլի 2016 թ.

## ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակարավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները

Համայնքի ավագանին որոշում է

1. Զովք համայնքի 2016 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականը ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ Դեմ Ձեռնպահ

Հ. ԳԱԼՍՏՅԱՆ

Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ջովք
համայնքի գլ խճուղի 16
Էլ փոստ.՝ angin.araqelyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 12-Ն
14 ապրիլի 2016թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 9-Ն ԵՎ 2014 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 40 –Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով .
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է
1.Ջովք համայնքի ավագանու 2013թ-ի փետրվարի 27-ի «Ջովք համայնքի 2013-2016թթ-ի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին» N 9-Ն որոշման հավելվածում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
2.Ջովք համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 12-ի «Ջովք համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N 40-Ն որոշման հավելվածում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
3.Սույն որոշումն ուժի մեջ համարել պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող 10-րդ օրը:

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ | | | |
| Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ջովք համայնքի գլ խճուղի 16
Էլ փոստ.՝ angin.araqelyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 13
14-ը ապրիլի 2016թ.

ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 33, 2013Թ-Ի ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով .
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է
1.Ջովք համայնքի ավագանու 2015-ի դեկտեմբերի 22-ի « Ջովքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 33 որոշման վերնագրում, տեքստում և հավելվածում «գյուղապետարանի« բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
2.Ջովք համայնքի ավագանու 2013 թ-ի ապրիլի 13-ի «Ջովքի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 11 որոշման վերնագրում, տեքստում և հավելվածում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ | | | |
| Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձովք համայնք Գ. խճուղի 16
էլ.փոստ .՝ angina.araqelyan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

14-ը ապրիլի 2016թ. N 14-Ն

## ՁՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 31- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին

Որոշում է՝

1.Ձովք համայնքի ավագանու 2015թ-ի դեկտեմբերի 22-ի «Համայնքի 2016թ-ի բյուջեն հաստատելու մասին» N 31-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն.
Բաժին 11, խումբ 1, դաս 2, 4891 հոդվածից 450000/ չորս հարյուր հիսուն հազար/ դրամ
Տեղափոխել՝
բաժին 10, խումբ 7, դաս 1 4729 հոդվածին :

2.Սույն որոշումն ուժի մեջ համարել պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող 10-օրը:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ | | | |
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| Ռ. ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՁՈՎՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ *03503369*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձովք համայնք, angin.araqelyan@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

*«14» ապրիլի 2016 թվականի N15-Ն*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 10.2-րդ կետը և 33.1-ին հոդվածը՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա. | | | |
| ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ. | | | |
| ՊՈՂՈՍՅԱՆ Ֆ. | | | |
| ԳԱԼՍՏՅԱՆ Հ. | | | |
| ԲԱՐՍՈՂՅԱՆ Ա. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջովք համայնք, գլ.խճու.16angin.araqelyan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2016 թվականի N16-Ն

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ կետով, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13 և 14 հոդվածները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը,

**Ջովք համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա. | | | |
| ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ. | | | |
| ՊՈՂՈՍՅԱՆ Փ. | | | |
| ԳԱԼՍՏՅԱՆ Հ. | | | |
| ՂԱՐՍՈՂՅԱՆ Ա. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձովք համայնք, գլխ. խճ6ու.16angin.araqelyan@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2016 թվականի N17-Ն

### ՁՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10.1-ին հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 6.1-ին կետի, 33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշումը,

**Ձովք համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա. | (ստորագրություն) | | |
| ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ. | (ստորագրություն) | | |
| ՊՈՂՈՍՅԱՆ Ֆ. | | | |
| ԳԱԼՍՏՅԱՆ Հ. | (ստորագրություն) | | |
| ԶԱՐՍՈՂՅԱՆ Ա. | (ստորագրություն) | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՁՈՎՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջովք համայնքի գյ. Խճուղի 16
Էլ փոստ՝ angin.araqelyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

14-ը ապրիլի 2016 թվականի N 18

ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 39 ԵՎ N 38 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 12-ի «Համայնքի բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 39 և « Ջովք համայնքի ղեկավարին կից համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմին ստեղծելու, հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին » N 38 որոշումները ուժը կորցրած ճանաչել :

2.Սույն որոշումն ուժի մեջ համարել ստորագրման պահից:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ | | | |
| Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՋՈՎՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ ՀՀ *03503369*